ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿ

ՀԱՐԳԵԼԻ՛ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ, ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ,
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է
«ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»
ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Երևան, 2025 թ., հոկտեմբերի 7
(հեռավար ձևաչափով, աշխատանքային լեզուներ՝ անգլերեն, ռուսերեն)

Գիտաժողովի նպատակն է քննարկել սկզբնական կրթության արդի մարտահրավերները, առաջադրել նորարարական լուծումներ՝ նպաստելով նախադպրոցական և տարրական կրթության ոլորտների բարելավմանը:

Գիտաժողովի ուղղությունները.

1. *Սկզբնական կրթության այլընտրանքային և նորարարական մոտեցումներ. հետազոտությունների արդյունքների վերլուծություն:*
2. *Ուսուցման և դաստիարակության ժամանակակից մեթոդների կիրառումը ՆՈՒՀ-ում և տարրական դպրոցում:*
3. *Արհեստական բանականության և մեդիատեխնոլոգիաների կիրառումը, մեդիակրթությունը ՆՈՒՀ-ում և տարրական դպրոցում:*
4. *Ներառական կրթության կազմակերպումը ՆՈՒՀ-ում և տարրական դպրոցում:*

Գիտաժողովի անցկացման պայմանները

Գիտաժողովին մասնակցելու հայտերը ներկայացնել մինչև **2025թ.հունիսի 25-ը**՝ հետևյալ հղմամբ՝
https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLScADvo-KJyEkvimN4TWie16rW98pPCsAibuE9Byxnr_1Vv-6A/viewform?usp=header

Հոդվածները ներկայացնել մինչև **սեպտեմբերի 10-ը**՝ հավելված 1-ում նշված պահանջներին համապատասխան:

Գերադասելի են ուսանող–դասախոս համահեղինակությամբ հոդվածներն ու զեկույցները:

Գիտաժողովի աշխատանքային լեզուներ են *անգլերենն ու ռուսերենը:* Ընտրված լավագույն զեկույցները կներկայացվեն գիտաժողովի ընթացքում՝ տեսաձայնագրության միջոցով, իսկ ներկայացված բոլոր նյութերը գրախոսումից և հրատարակության երաշխավորումից հետո կտպագրվեն առանձին ժողովածուով՝ էլեկտրոնային տարբերակով:

Հոդվածներն անհրաժեշտ է ուղարկել maramiraghyan80@gmail.com էլ. փոստին:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել գիտաժողովի կազմակերպիչների հետ՝ նշված էլեկտրոնային հասցեով:

Հավելված 1.

Հոդվածներին ներկայացվող պահանջները

Հոդվածի ծավալը չպետք է գերազանցի 5 տպագիր էջը: Ձևաչափ-ը՝ MS World նիշք (file), **թղթի չափը՝** A4, **լուսանցքները՝** 2 սմ բոլոր կողմերից, **ձևակերպում՝** Times New Roman:

Հոդվածի վերնագիրը գրվում է մեջտեղում՝ մեծատառերով և թավ, հաջորդ տողում՝ աջ հավասարումով հեղինակ(ներ)ի անուն(ներ)-ազգանուն(ներ)ը, հաջորդ տողում՝ կազմակերպության ամբողջական անվանումը, էլեկտրոնային հասցե:

Մեկ տող բացատից հետո՝ հոդվածի ամփոփումը՝ մինչև 150 բառ, ներքևում բանալի բառերը՝ 5-7 բառ, ապա հոդվածի ամբողջական տեքստը: Հաջորդիվ՝ գրականության ցանկը (3-7 անուն)՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ վերնագրով:

Գրականության ցանկում ներկայացված աղբյուրները պետք է հղումներ ունենան հոդվածի տեքստում՝ ուղիղ փակագծերում, օրինակ՝ [8, էջ 16]:

Գրականության ցանկից հետո ներկայացնել ամփոփումն օտար լեզվով (անգլերեն կամ ռուսերեն)՝ մինչև 150 բառ: